

## «ԿԱՄՈՒՐՋ» ՈՒՎԿ ՓԲԸ

**ՊԱՇՏՈՆԸ**  
**ԱՇԽԱՏԱԺԱՄԱՆԱԿԸ**  
**ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ**  
**ՎԱՅԻՆԸ**

Վարորդ  
Լրիվ աշխատաժամանակ  
անորոշ ժամկետով  
ՀՀ, ք.Վանաձոր

### ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

«Կամուրջ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն հայտարարում է մրցույթ Ընկերության «Վանաձոր» մասնաճյուղի վարորդի թափուր պաշտոնը համալրելու նպատակով: Աշխատողի հիմնական գործառույթները ներառում են վարորդական ծառայության մատուցումը Ընկերության աշխատակազմին և հյուրերին:

### ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Մատուցում է փոխադրման ծառայություններ Ընկերության անձնակազմի համար, օդանավակայանում և այլ տեղերում դիմավորում և ուղեկցում է Ընկերության աշխատողներին և հյուրերին:
- Համապատասխան մատյանում գրանցում է բոլոր երթուղիները, օրական վազքը, ստացված վառելիքի ծավալներն ու ծախսերը:
- Աջակցում է Ընկերության մասնաճյուղի վարկային ղեկավարների և մասնագետների՝ վարկի տրամադրման գործընթացին, հատկապես գյուղական համայնքներում:
- Խնամում և մաքուր է պահում ավտոմեքենան, հետևում է, որ ավտոմեքենայի տեխնիկական սպասարկումը կատարվի ժամանակին: Պարբերաբար տեղեկացնում է ավտոմեքենային տեխնիկական վիճակի վերաբերյալ:

•

### ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Վարորդական իրավունք առնվազն B,C կարգի/վարորդական փորձ/,
- Մանրամասներին ուշադիր և խիստ կազմակերպված անձնավորություն,
- Թիմային աշխատանքների փորձ,
- Հաղորդակցվելու հմտություններ:  
ԱՅԼ ՊԱՀԱՆՋՆԵՐ
- աշխատանքը ենթադրում է աշխատաժամանակի մինչև 90%-ը գրասենյակից դուրս աշխատելու պատրաստակամություն:

### ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Համապատասխան որակավորում ունեցող անձանց խնդրում ենք իրենց ինքնակենսագրությունը (CV) հայերեն լեզվով ներկայացնել ՀՀ, ք. Վանաձոր 2021, Գրիգոր Լուսավորչի 40/2 կամ ուղարկել էլեկտրոնային փոստով՝ [anahit.manukyan@kamurj.am](mailto:anahit.manukyan@kamurj.am)՝ հստակ նշելով պաշտոնը, որին հավակնում են:

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՍԿԻՉԲԸ՝  
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏԸ՝

12 նոյեմբերի 2021  
26 նոյեմբերի 2021